կան միջոցներով․ որով Էջմիածինը կը հանդիսանայ կարող լինելու 'ի գործ դնել այն ամեն պարտաւորութիւնը, զորս վերը յիշեցի։

Ս․

(Ի յաջորդն վերջ)

---

# ԿՐՕՆԱԿԱՆ

Ի մեծի աւուր Յայտնութեան Քրիստոսի վերլուծութիւն բանին Եսայեայ յետ որոյ եւ հաւաքմունք աստուածաշունչ բանից քարոզման յաւրինեալ ի խորհուրդ թագաւորաց որ յերկրի, արագ ցուցմամբ եւ իմաստասիրական սահմանաւ շարադրեալ Վահրամ վարդապետի, յորում աւուր աւծեալ ձեռնադրեցաւ թագաւորն Հայոց Մեծն Լեւոն.

„Բղխեսցէ գաւազան յարմատոյն Յեսսեայ, և ելցէ ծա-
„ղիկ յարմատոյ անտի։ Եւ հանգիցէ 'ի վերայ նորա Հոգի
„Աստուծոյ, հոգի իմաստութեան և հանճարոյ։ Հոգի խոր-
„հրդոյ և զաւրութեան։ Հոգի գիտութեան և աստուած-
„պաշտութեան։ Եւ լցցէ զնա հոգի երկեղի Աստուծոյ„։

Սկիզբն ամենայն տաւնից տէրունականաց՝ Աստուածայայտնութեանս տաւն է․ յորում աւուր յայտնեցաւ Աստուած՝ մարդ ծննդեամբ 'ի միջոյ կուսէն, որ էրն և միշտ էն 'ի միշտ Էէն 'ի վեր քան զբան։ Եղեալ մարմին տիրապէս, և մնացեալ անմարմին իսկապէս, զմերս առեալ ստուգապէս, և զիւրն պահեալ անյեղլապէս։ Բանն վասն մեր մարմին եղեալ, և ոչ փոխադրեալ, 'ի մարմին միացեալ, և անշփոթ մնացեալ, ոչ բաժանեալ և ոչ այլայլեալ, Աստուած 'ի կուսէ ծնեալ և մարդ կատարելապէս երևեալ, և նոյն ինքն Աստուած և մարդ խոստովանեալ։ Զամենայն ինչ զմարդկան անախտաբար կամաւորապէս կրեալ, և զնոսին յազնուականութիւն ինքեամբ 'ի մեզ վերագրեալ․ ոչ 'ի կրիցն տիրեալ, այլ գերագոյն նոցին 'ի կրեն կացեալ։ Ծնեալ և յանիծից զմեզ գնեալ ընծայեալ և զընութիւնս մեր Հաւր Աստուծոյ նուիրեալ․ Մկրտեալ և զմեղս մեր ('ի) Յորդանանու լուացեալ․ զփառակիցն իւր ըզ Հոգին ընկալեալ, և զնոյն առատապէս 'ի մեզ բաշխեալ։ Լոյս 'ի խաւար աշխարհի ծագեալ և զմէգ մթութեան մեղաց փարատեալ, կենարար վարդապետութեամբ զհոգիս մարդկան

լուսաւորեալ, և աստուածային սքան-
չելեաւք զմարմինս մեր վերանորոգեալ.
Ի բարձրութիւն խաչին ամբարձեալ և
նովաւ յերկինս զմերս բնութիւն բարձ-
րացուցեալ, յարուցեալ, և գլուխ
մեր գոլով՝ ամենայն մարդկութեամբ
ընդ աջմէ Հաւր նստեալ: Եւ այս-
պէս Որդին Աստուծոյ՝ որդի մար-
դոյ եղեալ, և զմարդկան որդիս՝ ինք-
եամբ որդի Աստուծոյ վերստեղծ-
եալ: Յորոց աւրհնութիւն միշտ և
երկրպագութիւն նմա՝ որ զայս շը-
նորհ ՚ի մեզ կատարեաց: Արդարև
ո՞ խաւսեսցի զզաւրութիւնս Տեառն,
լսելի արասցէ և զամենայն աւրհնու-
թիւնս նորա: Ճշմարտապէս այսաւր
է՝ զոր արար Տէր. եկայք ցնծասցուք
և ուրախասցուք ՚ի սմա: Աւրհնես-
ցուք զառաքեալն ՚ի Հաւրէ, որ աւրհ-
նեաց զմեզ յերկնաւորս ՚ի յաւրհնու-
թիւնս, որ ոչ անցանէ: Երգեսցուք
երգ նոր Աստուծոյ մերոյ, որ նո-
րոգեաց այսաւր զմարմին խոնարհու-
թեան մերոյ ըստ նմանութեան փառաց
իւրոց: Բարեբանեսցուք զԱստուած
՚ի սքանչելի սրբութեան նորա, որ նորա-
հրաշ ծննդեամբ իւրով յարոյց զաղ-
քատս յերկրէ և բարձր արար զտա-
ռապեալքս յաղբեաց: Մեծապէս գո-
հաբանեսցուք ընդ հովուացն այսաւր ըզ-
Հովիւն քաջ՝ որ նստի ՚ի քերովբէս.
և եկն ՚ի խնդիր բնութեանս մերոյ մո-
լորեալ աշխարհի. և Թափեաց ՚ի բե-
րանոյ անուանեալն առիւծու զըլթակ
ունկան նախամաւրն չորաչար լսելու-
թեամբ և զաքեացս երկուս նախա-
հաւրն անպատշաճաբար ՚ի ծառն ըն-
թացողութեան. ցնծութեամբ ընդ մե-
ծին Դաւթայ ասելով "Տէր հովուես-
ցէ զիս". որպէս երբեմն ողբացաք ընդ
նմա գոչելով թէ՝ մահ հովուեսցէ ըզ-
նոսա. ընդ մոգուցն ոսկւոյն և կնդրկին
և զմռոյն ընծայեսցուք նմա պատուա-
սիրաբար, իբրև երկնաւոր արքայի.
զխոհականութիւն և զմաքրութիւն սրտի,
իբր Աստուծոյ զանուշահոտութիւն վա-
րուց առաւել քան զկնդրկի: Եւ մե-
ռելութիւն բացագործելով որ ՚ի մեզն
է ախտից, յաղագս սիրոյ այնմ՝ որ ՚ի
վերայ մեր մեռաւ և յարեաւ: Ընդ
ամենայն արարածս արագեսցուք առա-
ւելեալք ՚ի պաշտաւն նմա՝ որ առաւել
քան զամենեսին բարերարեալք եղաք
՚ի նմանէ: Ածցուք ջուր ուրախու-
թեան յաղբերացն փրկութեան ՚ի մար-
գարէից անտի և յառաքելական ձայնից,
որք հրաշացուցին զաւուրս պատիւ.
որոց պարակից եղեալ, աստուածաբան
նոցին հնչմանց, մանաւանդ տեսանողին
զբարձրագոյնան և բարբառողին զհրաշա-
լիս Եսայեայ որդւոյն Ամովսեայ, որ
՚ի խորհուրդ աւուրս լուսոյ խաւսի,
ասելով "Բղխեսցէ գաւազան յարմա-
տոյն Յեսսեայ, և ելցէ. . . :

Ամենայն մարգարէք որ ծաղկեցին
՚ի տունն Իսրայէլի, բազմաման և
բազմաւրինակ բանիւք խաւսեցան վասն

փրկագործ տնօրէնութեանց Որդւոյն Աստուծոյ. մանաւանդ յաղագս ծննդեանն որ 'ի սրբոյ Կուսէն. Եւ թէ զտեսութիւն իւրեանց ընդ փարագուրաբանին ծածկեցին. ընդ այս մի՛ ումեք միտք տկարագոյնս խորհեսցին. քանզի նոքա ըստ ժամանակին և ըստ կարողութեան լողացն զբանն պատշաճեցուցին, զի որպէս 'ի գառինն ստուերական, առ այնմ ժամու թաքուցեալ կայր Գառնն ճշմարտութեան: Եւ մանանայն այն՝ որ յերկնից՝ Հացն կենդանութեան. և 'ի ջուրն՝ որ բղխեալ 'ի վիմէն յարիւնն Կենարարին 'ի կողէն, Եւ 'ի գաւազանն ծաղկեալ Ահարոնին, գաւազանն բողբոջեալ 'ի յարմատոյ անտի Յեսսեան. այսպէս և յորդարոցն մարմնատեսակ բանք, ծածկեալ կայր խորհուրդս մեր լուսաւորութեան. Վասն հրէականն ազգի տկարամտութեան, և առ 'ի գիրն միայն լըրջութեան: Զորս Թողցուք իբրև զմեռեալս հոգւով և մխիթեսցուք ընդ մեծին Դաւթայ ասելով. "Բա՛ց զաչս իմ և նայեցայց 'ի սքանչելիս աւրինաց քոց": Որով 'ի նոյն հոգւոյ աւժանդակեալ, տեսցուք սակաւուք զյոլովագոյն ծածկեալ իմաստ՝ որ է 'ի բանս առաջի եդեալ մեր. ոչ յոլովագոյնս 'ի մտածութեանցն 'ի մէջ առնելով, և ոչ ձոխ և ընդարձակ բանիւ զասացեալսն մերձ դնելով՝ քան զառաջիկայ մեր և վասն այլ ևս խորհրդածութեան ընդ սմին խաւսել: Վասն որոյ զի մի՛ ընդ հոլովաբանութեամբ պարսաւանաւք (նօք) անկցուք, համառաւտ յաղագս մարգարէական բանիս խաւսեսցուք՝ որ ասէ "Բղխեսցէ գաւազան յարմատոյն Յեսս...:"

Զանմարմնաբար ծնելոյն 'ի Հաւրէ, զմարմնական ծննդենէն որ 'ի Մարիամայ սրբոյ Կուսէ ճառել կամելով մարգարէս. բղխեալ զնոյն վերագրէ: Ըստ որում Եղիսաբէթ զծնունդ սրբոյ կուսին "պտուղ որովայնի նորա" աւրհնաբանէր (օրհնաբանէր): Իսկ հրեշտակն զնոյն ծնունդ աւետէր, "որ 'ի նմա ծնեալն է 'ի Հոգւոյն սրբոյ": Եւ թէ "Ծնցի որդի". և նոյն մարգարէ՝ որ աստ բղխումն, զնոյնն դաւանեալ և ծնունդ անուանէ, "Ահա կոյս յղասցի և ծնցի որդի" և թէ "Մանուկ ծնաւ մեզ որդի և տուաւ մեզ": Այսու զբարձրագոյն խորհուրդ մեզ աւանդելով: Ծնընդեամբն՝ զծնեալն 'ի սրբոյ Կուսէն անդաւստ 'ի նորին բնութենէ և յէութենէ նշանակելով զոլ ճշմարտապէս, և բղխմամբն և պտղովն զանախտաբար և զառանց արատոյ զյայտնեալն 'ի Մարիամայ ցուցանելով խնկապէս: Քանզի և զառաջինն ծնունդ որ անմայր 'ի Հաւրէ, այսպէս գիրք Աստուածայինք յայտնաբանեն: Ծնունդ որպէս և է՝ զնա Հաւր քարոզեն՝ ըստ բանին որ 'ի Հաւրէ առ նա թէ՝ "Յարգանդէ յառաջ քան զարուսեակ ծնայ զքեզ". և դարձեալ հայրական ('ի) սրտէ Հաւրէ բղխեալ զբանն վերահռչակեն ըստ առ 'ի Հաւրէ բարբառոյն թէ՝ "Բղխեսցէ

սիրտ իմ զբան բարի"․ ոչ թէ այսու բղխումն 'ի Հաւրէ զորդին ցուցանէն, զի այս Հոգւոյն է յատուկ առանձնաւորութեան, այլ որպէս զՀոգին սուրբ որ բղխումն է 'ի Հաւրէ, ծնունդ ըզնա գիրն կոչէ, ըստ որում Սողոմոն ՃԾՆ՝ Սիրածին զնա անուանէ, Նոյնպէս և զծնեալն զՈրդի՝ բղխումն 'ի Հաւրէ պատմաբանէ։ Որպէս զի ծննդեամբն զբնութիւն էակցութեան ընդ Հաւր․ զՈրդւոյ և զՀոգւոյն յայտնեսցէ 'ի նորին գոլ յէութենէ։ Նա բղխմամբն զանախտութիւն և զառանց չարչարանաց և հատման զելումն գուշակեսցէ, այլ ըստ առանձնաւորութեան՝ զՈրդին ծընունդ միշտ և զՀոգին բղխումն 'ի Հաւրէ առանձնաւորութ̄ ըստ յատկութեան բանի, նոյն Աստուածային գիրքքարոզէ։ Նոյնպէս և ըստ մարմնոյն ծնունդս բղխումն 'ի Կուսէն մարգարէն ասէ․ 'ի նկարագրութենէ աստի յայտնի է՝ զի ոչ ըստ Հրէիցն 'ի Դաւիթ կամ յԵզեկիաս վերաբերի․ զի Թէպէտ յարմատոյ անտի Յեսսեայ էին նոքա, սակայն եղեալք էին և Թագաւորեալք յորժամ մարգարէն զբանս ճառէր։ Նա այս առյապայ և զլինելոյ իրաց խաւսի, որ 'ի Տէր մեր Յիսուս կատարի։ Իսկ Թէ ժըպրհեսցի ոք 'ի Զաւրաբաբէլ լուծանել զբանս՝ իբր Թէ դեռ ևս բղխելոց էր, զհետ եկեալքն ոչ ևս ձեռնտու լինին և պատշաճագոյն․ զի ո՞ւր եհար նա զերկիր բանիւ բերանոյ իւրոյ և կամ ե՞րբ առ նովաւ գայլք և գառինք 'ի միասին ճարակեսցեն․ ըստ որում Քրիստոս աւետարանական բանիւն վարեալ վանեաց զամենայն երկրաւոր և զմեղաւոր խորհուրդ և զգործ․ և 'ի նորին մարմնաւորութենէ անտի գայլաբարոյք և հեզք և գառնամիտք, այս է՝ զգանամիտք 'ի մի արաւտ մարմնոյ և արեանն Քրիստոսի ճարակին։ Յաղագս որոյ ըստ տիրապէս տեսութեանն, 'ի նոյն ինքն նա յայտնաբանի նախաճառութիւնս՝ Թէ "Բղխեսցէ գաւազան յարմատ․ ․ ․ ․

Քանզի կոյսն յարմատոյ անտի Դաւթի էր, և յԱբրահամէ՝ յորմէ Բանն մարմին էառ խոկապէս, զոր բղխեալ ասէ՝ յայտ արարեալ զառանց ամուսնութեան ծննդեանն․ ոչ ասէ 'ի սերմանէ կամ յերկրէ, այլ յարմատոյն գաւազանն բղխեսցէ։ Ոչ զի արմատն անցանիցէ, այլ զի անախտին յարմատոյն բղխեսցէ, այսինքն՝ ոչ մարմին ընդ մարմնի անցանիցէ, այլ զի 'ի բնութենէ Կուսին առնուցու մարմին։ Ոչ յերկնից ինչ բերեալ մարմին, և ոչ այլ ինչ 'ի նոր արարածոց, և ո՛չ զինքն 'ի մարմին շրջեալ, այլ մարմին ճշմարիտ առեալ 'ի Կուսէն հանդերձ մտաւքն (մտօքն) և շնչով․ յիւր մարմին բանին Աստուծոյ, և ո՛չ մարդոյ ուրուք մարմին արտաքոյ քան զինքն որպէս Պողոս ասէ՝ Թէ "Եկն և եղև 'ի կնոջէ․ և Թէ յարմատոյ անտի 'ի նախնեացն էր նա ըստ մարմնոյ՝ ընդ այն մի՛ փոքրագոյն ինչ խորհեսցիս։ Քանզի նոյն ինքն նա և արմատ էր Յեսեայ և ամենայն սերելոցն յԱդամայ,

որպէս նոյն ինքն ասէր 'ի յայտնութեան Յովհաննու. "Ես Յիսուս Քրիստոս առաքեցի զհրեշտակ իմ վկայել յամենայն եկեղեցիս. ես եմ արմատ եւս և Դաւթի և Ադամայ, և աստղ առաւօտին, և Հոգին և փեսայն՝ որ գալոց եմ": Եւ նոյն մարգարէ զսա ինքն կոչէ արմատ. "Պատմեցաք ասէ զնմանէ իբրև զմանուկ՝ իբրև զարմատ 'ի ծարաւուտ երկրէ":

Շարունակելի.

---

## ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ

### ԹԵՄԱԿԱՆ ԴՊՐՈՑԱՑ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹԻՒՆ

Ահաւասիկ ս. Աթոռոյս Լուսաւորչական Յանձնաժողովը Թեմական Դպրոցաց Կանոնադրութիւնն եւս աւարտած լինելով, կը փութամք հրատարակել ստորև.

## ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹԻՒՆՔ

### ՅԱՂԱԳՍ ԹԵՄԱԿԱՆ ԴՊՐՈՑԱՑ ՀԱՅՈՑ ՈՐ Ի ՌՈՒՍԱՍՏԱՆ.

Թեմական ասին այնոքիկ 'ի դպրոցաց, որք հաստատեալ են յԱռաջնորդանիստ տեղիս և 'ի գլխաւոր քաղաքս Ռուսաստանի վասն կրթելոյ յայլ և այլ հրահանգս ուսմանց զթերավարժ աշակերտս աւարտեալս զընթացս գիտութեանց 'ի Ծխական Դպրոցս.

### ԳԼՈՒԽ Ա.
### ՅԱՂԱԳՍ ԹԵՄԱԿԱՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՑ ԵՒ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԱՑ.

1) Թեմական Առաջնորդն համարի նախագահ Անդամ Ժողովոյ Հոգաբարձութեան. Բարոյական զարգացումն Աշակերտաց և վերահասութիւն բարւոք դասատուութեան կրօնական գիտելեաց գլխաւորապէս կախին զնկատողութենէ Առաջնորդին.

2) Թեմական Առաջնորդն՝ վասն հաւատարիմ և արդիւնաւոր ծառայութեանց Հոգաբարձուաց ազգային Թեմական Դպրոցաց առաջարկէ Լուսաւորչական Յանձնաժողովոյ Էջմիածնի խնդրել 'ի Վեհափառ Կաթողիկոսէ ամենայն Հայոց զարժանաւոր վարձատրութիւն.

3) 'Ի բացակայութեան Թեմական Առաջնորդին փոխանակէ զնա նոյն իրաւամբ Նախանդամն վիճակային Ատենին. իսկ յայլ քաղաքս Նախագահն Հոգևոր Կառավարութեան.

4) Թեմական Դպրոցն պարտի ունել զՀոգաբարձուս ոչ պակաս քան զչորս

Ծանօթ. Թէպէտ կանոնագրութիւնքս այսոքիկ խմբագրեցան իբրև ի հրահանգս կառավարութեան թեմական դպրոցաց, սակայն Թեմական Առաջնորդք և Հոգաբարձութիւնք ի նկատի ունելով զհանգամանս վիճակաց իւրեանց և զդրամական կարողութիւն, կարեն առնել բացառութիւնս ինչ, այլ հետևելով միշտ այնց յօդուածոց որք պատշաճին ամենայն թեմական դպրոցաց իբրև սկզբունք կանոնագրութեանց նոցին.